



Ա.ՀԻՊՈՎՑՆ  
ԱՐԵՎԱԾԱԳ



1934

ՍՈՒԽՈՒՄ



891.99  
Q-57

NOV 2011

891.99  
2-57

Ա. ԶԻԴԱՐՅԱՆ

# ԱՐԵՎԱԾԱԳ

1008 3 941  
37163

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԲԻԱԶԻԱՅԻ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ-

ՍՈՒԽՈՒՄ

1934



51912

24.07.2018

### ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ.

„Արևածագն“ իմ ստեղծագործությունների առաջին ժողովածուն ե, վոր գրել եմ տարբեր ժամանակներում—1924 թ. սկսած մինչև 1930 թ.:

Յես ինձ յերբեք բանաստեղծ չեմ համարել և գրել եմ վոչ թե հրատարակելու, այլ ինձ համար, բայց այսորվա գըական մեծ շարժումը, վորը ծավալվել ե մեր յերկրի ամեն մի անկյունում, դուքս հանեց նաև ինձ:

Ա. Զիդարյան

Հանձնված ե մամուլին 25/VI—34 թ.  
ստորագրված ե՝ տաղագրութ. համար 16/VII-34 թ.  
ծավալը 2 թերթ. չափ 60×75,  
թերթի տարրողությունը 30,240 նշան.  
Գլավիտ 32—ա  
Պատվեր № 2941. Տիրաժ 2000 որինակ.  
Աբականի տպարան.

## ԳԱՐՈՒՆ

Արևն այնպես վառում եւ այսոր . . .  
(Գեռ ելեկ ձյուն կար մայթերի վրա,  
Յեկ հազար կյանքեր զարթնելով այսոր,  
Զերմ վողջունում են զարուն այս տարվաւ)

\* \* \*

Յերեկվա անգուսպ հողմերում ձևված՝  
հողմերի թափն եւ իմ հոգում անեղ.  
Այսոր որերի թերը դարձած՝  
Որերի յերգն եմ հյուսում ամեն աեղ:  
Հողմերը աարան սիրտս փոթորկվաղ,  
Տարան խառնելու հազար սրտերին.  
Թռան, գնացին մտքերս այրվող  
Ավետիք տալու գալիք դարերին:  
Յեկ յես առանց ինձ . . . աշխարհն իմ հոգում  
Անյերկյուղ ընկած որերի առաջ,  
Համառ ու վստահ ճամբա յեմ պատռում,  
Վոր գանեմ, ստեղծեմ ինքս ինձ նորից:  
Վողջույն եմ ասում ծնվող սերնդին,  
Փառքով եմ հիշում ծնունդս վաղաժամ  
Յեկ աշխատանքս, ինչպես յերգ, ժպիտ  
Նետում եմ թափով բյուր սերունդներին:

1926թ.

Յերևան

Ինչով յես արդյոք պիտի վողջունեմ  
Գարունը հոգուս, գարունը կյանքի . . .  
Քանի գարուններ ձուլվեցին իրար,  
Քանի գարուններ ապրում եմ հիմի:  
Գյուղով պիտի արդյոք գնամ այս ամսին,  
Յեկ ինչպես շոփեր իմ տրակտորով  
Քանդեմ դարերի սահմանները հին,  
Չուլեմ սրտերը բամած իրար քով:

Թե՞ գործարանում պիտի մաքառեմ  
Հինգամյակը մեծ չորս տարվա համար.  
Յեկ այդ պայքարում յես ինձ պատրաստեմ  
Գալիք ել հակա գործերի համար:  
Թե՞ գնալու յեմ դեպի ուազմազաշտ  
Վառող—գնդակից յերգեր հյուսելով,  
Շաղ տամ աշխարհով մեր հոգին անհաշտ՝  
Նա ել բոնկի մեր յերկրի բոցով:

Աւր ել վոր զնամ, ինչ ել վոր լինի,  
Յես միշտ պատրաստ եմ յերգ ու ժպիտով,  
Աւր ել վոր յերնեմ մարտի այս տարի  
Պիտի հեղեղեմ իմ հոգու թափով:

Ինչով պիտ արդյոք ես ջերմ վողջունեմ  
Գարունը հոգուս, գարունը կյանքի . . .  
Քանի գարուններ ձուլվեցին իրար,  
Քանի գարուններ ապրում եմ հիմի:

1930թ.

Լենինգրադ

## ԱՐԵՎԱԾԱԳ

Իմ դեմ բացվեց հարթությունը խորհրդայինն,  
Հարթություններ՝ այնքան նոր ու այնքան  
ել հին.

Իսչքաննայես այս դաշտերով անծայր-հեռուն,  
Նոր հեռուններ միշտ կրացվեն հեռվում-հեռուն:

Տեղ-տեղ մենակ լայնատարած դաշտերում  
Փոքրիկ թփեր գեպի վեր են բարձրանում,  
Կաթիլներ են կարծես նոքա քրտինքի,  
Վոր քամվել են ճակատիցը մայը յերկը:

Իսկ թփերից գեպի այն կողմ, ինչպես յե-  
զերք,

Տարածվել ե անտառն անհուն դեպ արևելք.  
Անցած մոայլ, արյունոտ ու սև դաժան  
կյանքի:

Հուշարձան ե՝ մոայլ, վշտոտ ու կենդանի:

Անտառի մոտ, նրա փեշին փաթաթված,  
Կծկվել են խրճիթները մեր գյուղի,  
Վորտեղ այժմ վեր են կացել խոր քնից  
Լվացվում են հերոսները որերի:

Իմ դեմ բացվեց հարթությունը խորհրդայինն,  
Հարթություններ՝ այնքան նոր ու այնքան  
ել հին.

Դեռքիչ առաջ սև խավար եր խոր, անհատակ,  
Այժմ իմ դեմ արշալույս ե—արևածագ:

1929 թ.

Լենինգրադ

Սյուր ստացա նամակդ վերջին,  
Վորտեղ լավիս ես գրչի արցունքով.  
Հիշեցրիր նորից որերը մեր հին,  
Որերը թաղված որերի փոշով:

Գրում ես, լավիս ու չես հասկանում,  
Թե ինչպես հանկարծ յես անհայտաց,  
Թե ինչպես հանկարծ մնացիր մենակ  
Նստած ծովափի հին քարի վրա:

Ու գանգատվում ես քո ճակատագրից,  
Վոր լավ որերդ շատ արագ անցան.  
Ու հարց ես տալիս, թե ինչո՞ւ, ինչո՞ց  
Վողջը թողեցին ու անհայտացան:

Գրում ես նույնպես, վոր մեր դասընկեր  
Սուրբիկն ել զնաց, ու այժմ դու յես  
Շըշում ծովափում մենակը անընկեր,  
Իսկ շուրջդ բոլոր խորթացել ե քեզ:

Ու հեկեկալով խնդրում ես յերկար,  
Վոր հասկանամ քեզ ու վերադառնամ,  
Թե չե ձանձրույթը պատել ե համառ,  
Ոորորում ե քեզ յերկյուղը մահվան:

Ու վերջացնում ես խոսքերով անկապ,  
Վորսնք սրափցդ քանդվելով հատ-հատ,  
Վոնց հարլող մոմի կաթիները պար  
Ներկել են թղթի յերեսը. ճերմակ:

Փակեցիր աչքերդ որերի հանդեպ,  
Չուզեցիր լսել աղմուկը պայծառ,  
Ու ձեռդ առած սիրո մի հին վեպ  
Թմբեցրիր հողիդ յերգով միալար:

Ու սենյակը ձեր դարձրիր փոքրիկ խուց,  
Աղոթող կույսի պես փակվեցիր այստեղ,  
Իսկ հարսիդ հայելին դարձրած իկոնա  
Վախտ մոմի պես դեմն եյիր դու միշտ:

Ու հիմա յելած վնասում ես ախուր  
Դու այս ամենը, ինչ անցավ, գնաց,  
Չքացավ անհետ՝ յետ չդառնալու,  
Իսկ դու ճամբորդ ես դեռ ճամբա չելած:

1926 թ.

Յերևան

## ԱՆՇԱՆՈԹ ԱՂՋԿԱՆ

Անծանոթ աղջիկ, արդյոք ով ես դու,  
Արդյոք ով ես դու, անծանոթ աղջիկ.  
Դժբախտ ես դու մեր անծանոթությամբ,  
Թէ՛ զբանով յես այժմ յերջանիկ:

Ես շատ կուզեյի քեզ տեսնել մի որ,  
—Այժմ չզիտեմ անունող նույնիսկ,  
Մի անզամ միայն այս իմ բաց սրտով  
Կուզեյի հեռվից ժպտալ քեզ մեղմիկ:

Բայց մի՞թե այսպես ավելի լավ չի,  
Կարող ե հարցնել սիրտ կասկածոտ.  
—Վո՞չ խոսք ենք տալիս հայացքներով լի,  
Վո՞չ խարում ե մեզ մի հույսի կարոտ:

Գիտեմ, դու ունես մի փոքրիկ շրջան՝  
Ընկեր, քույր, ծնող, քեռի ու սիրած,  
Ու քաղցր ե թվում այդտեղ ամեն բան,  
Այդ քաղցրությունից քո հոգուն թմրած:

Բայց զիտեմ, շուտով պիտի հագենա  
Քո ջանել հոգին քաղցրությունից պաղ  
և ըմբռստացած թագուն, ակամա  
Յելք պիտի փնտուս կյանքից այդ դժբախտ:

Ես այժմ չունեմ ոտար, հարազատ.  
Այդ սահմանափակ կյանքից ինձ համառ  
Նետել եմ հեռուն, և սիրտս ազատ  
Բաց ե կաշկանդված սրտերի համար:

1928 թ.

Յերևան

## ՔԱՂՔԵՆԻ ԱՂՋԿԱՆ

Մշուշոտ որերին պատրւհանիդ մոտ  
Նայում ես փողոց աչքերով խաբող.  
Մեկն ես վորոնում փողոցում ցեխոտ,  
Վորպեսզի կյանք տա քո հոգուն մեռնող:

Լարել ես թակարդդ փողոցի միջում  
Ու սպասում ես անհամբեր վորսին.  
Հառել ես աչքդ, ինչպես աղոթքում  
Յեվ յերազում ես անցածիդ մասին:  
Հիշում ես անցածն յերազի նման,  
Յերանի տալով քո հոգու խորքում,  
Բայց չե վոր դու յել յերազ ես միայն  
Տենդոտ որերի բոցավոտ ծոցում:

Դու հիշատակն ես անցածից անհաս,  
Վոր յերեւմ ես պատուհանիդ մոտ.  
Բայց շուտով դու ել յերազ կդառնաս  
Յեվ ո՞վ կնայի որերին աղոտ:

Միշտ յերեւմ ես պատուհանիդ տակ,  
Յերբ վոր յերկնքը լալիս ե հատհատ,  
Դու յել ես լալիս յերկնի հետ մենակ  
Անվերջ մոռացվող անցածդ ու ներկադ:

1924 թ.

Յերևան

## ՅԵՐԵՎԱՆ

Գլուխը դրած Քանաքեսի բարձրունքին,  
Արաքսի մեջ իր վոտքերն ե լվանում.  
Փակել ե նա Ալաղյազի վեշերին,  
Վորոնք նրան փաթաթել են որոցքում:

Նրա տռաջ Մասիսներն են փոքր ու մեծ,  
Վոր կանգնել են յերկրի վրա վոնց հսկա.  
Մեծը՝ վորպես ծեր պատվավոր զյուղացի,  
Փոքը՝ ջահել—ու կանգնել ե վոնց վեստ:  
Զանգու գետն ել իր ջրերով ամեն որ  
Յերգ ե ասում ականջի տակ դյուցազնի,  
Յեվ իր յերգից պսակ հյուսած բյուրավոր  
Զարդարում ե որորոցը մանուկին:

1929 թ.

ԼԵՆԻՆԳՐԱԴ

## ՆԵՆԵԿԻՍ

(Ն Ա Մ Ա Կ Լ Ե Ն Ի Ն Գ Բ Ա Դ Ի Ց)

Ել վոնց ես, նենք, վոլորում ես դեռ  
իլիկի բարակ,  
Թե՛ նա յել հիմա ընկած է անտեր,  
Կոտրած թախտի տակ:  
Ինձ միշտ համում են լուրեր քո մասին,  
Պարզ-վորոշ լուրեր,  
Վոր դու կորցրել եռ հանգիստդ վերջին,  
Սառնությունդ ծեր:

Ու շատ գիշերներ ահ ու դողի մեջ  
Դու վեր ես թոչում,  
Սարսափով պատմում յերազներդ անվերջ  
Ու խաչ ես հանում,  
Իսկ հաճախ անքոն լուսացնում ես դու  
Աչքերդ փակած,—  
Յերազները չար, մտքերն անարկու  
Տեսիներ գարձած,  
Այլանդակ ձեռվ խառնված իրար  
Խաղում են անկապ,  
Կմախքացած տան պատերի վրա  
Ու անցնում շտապ:  
Յեկ դու հալածված կասկածներից չար  
Անիծում ես քեզ,  
Հանգիստ ես վնասում մտքերից ոտար,  
Յերազներից մեծ:

Յեկ այդ ուշ ժամին վասում ես ոջախի  
Կրակը թաղված,  
Ու լության հետ լուսմ ես յերկար  
Գլուխդ կախած.  
Կատուն և մեսակ մոռացնում մոխրում  
Աչքերով իր փակ,  
Իսկ պատի ձեզից վորդն և սկացնում

Միալար ու պաղ:  
Ու թվում ե քեզ, վոր այդ ուշ ժամին  
Պիտ վերադառնամ,  
Ու կտեսնես ինձ որերիդ ծայրին  
Դու վերջին անգամ:  
Ահա թե ինչու ուրախ յերկուղից  
Սոսկում ես անձայն,  
Յերբ շունն ե հաջում կտմ դռան տակից  
Լսվում ե մի ձայն:  
Գրում են նույնակես, վոր դու զարմացած  
Հարցնում ես հաճախ,  
Թե ինչնւ, ինչի՞ ինչի՞ց վշտացած  
Վճռեցի անհաղթ,  
Թողի հեռացա արտերն ընդարձակ,  
Ծնող, տոն, յեղբայր—  
Հեռացա անձայն, ընկա մեն-մենակ  
Աշխարհով անծայր:  
Այսպես, յես գարձա մի բարդ հանելուկ  
Քեզ համար հիմա,  
Իսկ դու լինձ համար մնացիր մի պարզ  
Հեքյաթ հնամյառ  
Պատմում են նույնակես, վոր մի սկ կասկած  
Սիրոդ և մտել  
Թվում ե մի պահ . . . և դու քարացած  
Դառնում ես մեռել  
Վոր յես ել չկամ, կորել եմ անդարձ  
Աշխարհում ոտար,  
Իսկ քեզ խաբել են լուրերով սարքված  
Տարիներ յերկար.  
— Յեկ դուցե հիմա վկորչեմ անհետ  
Մեծ Արևելքում  
Դավաճան, վարձված Զան-Կայ-Շիի հետ  
Մզկող պայքարում:

Ասում են նույնպես, վոր իմացել ես,  
 թե ինչպես հանկարծ  
 թողիդ սիրածը ուրախ պարզերես  
 Պատկի գնաց.  
 Ու թվում ե քեզ, վոր դարձած անհույս  
 Յես տուն չեմ դառնա,  
 Զես տեսնի ել ինձ աշխարհում այս լույս,  
 Կարոտով հսկա . . .

Մի հուզվի, նենէ, կանցնի և շուտով  
 Քո վիշտը ոտար,  
 Կդամ յես նորից, մանկան ծիծաղով  
 Կտեսնենք իրաբ:  
 Կդամ ես, նենէ, նստած յերկաթե  
 Սև թոշնի վրա  
 Ու կդնանք մենք, կթռչենք անթե  
 Գեղ Զախարովկա:  
 Կդամ ես, նենէ, Բաղդադ—Հալեպից,  
 Բայց կդամ մի որ,  
 Կրերեմ ինձ հետ այս մեր աշխարհից  
 Գործերը բոլոր,  
 Վոր դու հասկանաս, շոշափես, տեսնես  
 Ու ինքդ քանդես  
 Հանգույցները բարդ ու ինքդ լուծես  
 Հանելուկը մեծ:

Յես նորից, նենէ, են հին, առաջվա  
 Սրցոն եմ խելառ,  
 Վոր քանի անգամ ծառերից ընկա  
 Ծնկույզի համար,  
 Յեղ դու շալակած բերում եյիր տուն  
 Զոլերից անտեր,  
 Աղաչում եյիր, անհույս խրատում  
 Ու լալիս ինձ հետ  
 Այդ յես եմ, այն, Զախարովկացի

Քո թոռը չոբան,  
 Վորը շնորհիվ, քեզ անհասկանալի  
 Ուժի գորության,  
 Գուրս թռավ թափով, դարերով ծամված  
 Այդ կյանքից կոր,  
 Հաղթեց սերունդներ, մաքերը ձևած,  
 Հույզերը տկլոր . . .  
 Յեղ այժմ այստեղ անկաշկանդ, ազատ,  
 Անզուսպ ու արի,  
 Կանգնել եմ վստահ, ինչպես հարազատ  
 Ժառանգն աշխարհի,  
 Նայում եմ շեշտով յերկրագնդին վողջ  
 Հոգով անհանդիստ . . .  
 Ուզում եմ, նենէ, աշխարհը ամբողջ  
 Թեիս տակ դրած՝  
 Տուն վերադառնամ հաղթական քայլով  
 Ուրախ, պարզերես,  
 Մեծ աշխատանքի, մեծ բերքը մեջքիս  
 Մեր դուռը բացես:

1929 թ.

Լենինգրադ

## Ա Ր Ե Վ Ե Լ Ք

Под внешне незыблемой поверхностью открылся необычайный океан, которому достаточно прийти в движение, чтобы разметать вдребезги целые материками

(К. Маркс)

## Ն Ա Խ Ե Բ Գ Ա Ն Ք

Արևելքը հին դարերի  
Հեքյաթների ծննդավայր,  
Հրաշքների աղբյուր անվերջ  
Առասպելի ծնող ու հայր.  
Յոթ գլխանի գեերի բուն,  
Կախարդական հսկա մի կուժ,  
Գետակները անմահական,  
Սղբյուրները ամենաբուժ:  
  
Արևելքի հազար ու մեկ  
Գիշերները համատարած,  
Վոր պատմել են սերունդները  
Հազար ձեռվ նրանց հյուսած,  
Վորոնց մասին տառա այնքան  
Բան ե պատմել գիշերն անքուն,  
Վորոնք այժմ նոր ձերալ  
Փոթորկվում են միշտ իմ հողում:  
  
Այսոր նորից, յերբ թերթում եմ  
Լրագրներն ամենողյա,  
Յես տեսնում եմ հազար հրաշք  
Սրեւելքի դաշտի վրա.  
Ու զգում եմ հեքյաթները,  
Վոր պիտ հյուսվեն ապագայում.  
Հեքյաթները՝ վոչ թե վիշապ  
կամ խնձորի ծիրանագույն,

Վորը իւեց գեի մոտից  
Թագավորի փոքրիկ տղան,  
Բյուր տանջանքով բերավ հասցրեց  
Հրաշտագեղ սիրած աղջկան:  
Հեքյաթները պիտի հյուսվեն  
Արևելցու, իրա մասին,  
Առասպելներ, վորոնց հերոսն  
Պիտի լինեն հնդիկն ու չին:

Նրանց աճեղ պայքարը մեծ,  
Վոր տանում են նրանք այսոր,  
Պիտի յերգեն ապագայի  
Հոմերոսներն հազար ձեռվ:  
Ու սերունդներն բյուր ներբողով  
Փառաբանեն պայքարը այդ,  
Սերունդները, վոր չեն տեսնի  
Իրենց գլխին մտրակ ու վայտ:  
Եղ գալիքի յերգն ե ահա,  
Վոր հնչում ե շատ-շատ սրտում,  
Այս մեծ կովի արյունն ե վառ,  
Վոր հոսում ե բյուր սրտերում.  
Ու այս կովի թափով հարբած  
Փոթորկվում ե սիրա տեղում,  
Փոթորկվում ե, թևագորգում  
Մեր որերի թափով հուժկու:

Յեվ փոթորկվող սրտիցս ահա,  
Վորպես հեքյաթ գուրս ե ժայթքում  
Այս մեծ կովից մի յերգ չնշին,  
Վորն հյուսվում ե արևելքում:

1.

Ու գիշեր ե, մութ ու գնդան,  
Կայծակներն են կոտրտվում  
Յեվ ձեղքելով ժայռե ամպեր  
Դեպի ցած են սրանում:



Ու անձրես հեղեղի պես  
Յերկնից թափվում դեպի ձոր,  
Հեղեղում ե աշխարհը վողջ  
Սրբում, տանում փոշին չոր:

Անապատը, վոր վառվում եր  
Արևի պես շիկացած,  
Յեվ ափազը յերկինք հանում  
Են մեծ քամին կատաղած.  
Փոթորկվում եր անապատը,  
Խնչպես ովկյան մըրկոտ  
Ու խեղդում եր կարավաճներ  
Փոշին լցրած մինչ կոկորդ:

Անապատը այդ կերպվա,  
Վոր հսոց եր կայծերի,  
Այժմ կուրծքը դեմ ե տվել  
Հրեղնացած թրերի,  
Վոր հետում են սև ամպերը  
Յեվ խավարը անթափանց.  
Մութ ամպերը վորոտում են  
Արևելքում շիկացած:

Վորոտում են քարերի մեջ  
Բների մոտ իժերի,  
Սարսափեցնում ոձ ու կարիճ,  
Առյուծներին կատաղի:  
Դղրդում ե արևելքը  
Վորոտմունքից ամպերի,  
Վոր լիզում են ձոր, լեռ ու գաշտ  
Լեզուներով սարսափի:

Ու յերկյուղով քուն ե մտել  
Արևելքը մշուշոտ,  
Քնել են վողջ քաղաքները  
Ու գյուղերը միշտ փոշոտ:

Մենակ այնտեղ քյոշքներում  
Իմաստուններն խորհրդով,  
Հա թերթում են գիրքը իրենց  
Լավն ու վատը խորհելով:

Մեհյաններում գորգով պատած  
Յեվ պատերը մարգարիտ,  
Քեփ են անում արևելքի  
Իշխաններն անժպիտ:  
Նրանց գիմաց նստոտել են  
Միսսիոններներն արևմուտքի  
Յեվ լափում են մի գիշերում  
Աշխատանքը միլիոնների.

Նոցա շուրջը աբրեշտմե  
Բարձերի մեջ հինավուրց,  
Հա վիստում են հարձերն նոյա  
Իրենց նման մակարույժ,  
Մերկ են, ակոր և ճահիճի  
Վորդերի պես վորորուն,  
Ճարպոտ լեզով թափալվում են  
Փետուրների ովկյանում:

Իսկ մեջ տեղում,—արևելյան  
Գորգի վրա թանկազին,  
Կոտրտվում ե նուրբ վոտներով  
Ծախու առված պարունին:  
Հաղար ձևով շրջում ե նա  
Կանթեղի տակ կաթնալույս,  
Վոր զարթնեցնի տերերի մեջ  
Մարած կրքի անզոր հույս:

Իսկ տերերը կովի աչքով  
Քաշ են յեկել նրանց քով  
Յեվ նայում են, և վորոճում  
Իրենց նեխած մտքերով:

Ու ծծում են ճահճում պառկած  
     Չագերի պես խողերի,  
 Ծծում աղահ, լիզում անվերջ  
     Ստիճները հարձերի,  
 Մինչև անզոր բաց են մնում  
     Բերանները լորձունքոտ,  
 Ու թմրում են ուղեղները  
     Յերկու յերեք առավոտ:  
     2.  
 Իսկ դաշտերում, ստեպներում  
     Մեծ գետերի յեղերքներին,  
 Լճերի մոտ, ճահճներում,  
     Կիրճերի մեջ խոր ու մթին  
 Տարածվել են ցիր ու կորած  
     Տնակները միլիոնների,  
 Տնակները, վորոնք կարծես  
     Շիրմաքարն են կառուցողի.  
 Ու նոցա տակ քուն են մտել  
     Մշակները կմախքացած,  
 Վորոնց հայրը շեկ ավագն ե  
     Քրտինքի հետ շաղախված:  
 Նրանց մարմնից ապարանքներ,  
     Պալատներ են դուրս քամվել  
 Ու նրանց մեջ, մարմին նոցա  
     Վաճառքի յե դուրս հանվել:  
 Նոցա քրտինքն ինդոս, Գանգես  
     Գետերից ել վար հորդառատ  
 Հեղեղել ե աշխարհը վողի,  
     Դարձել հազար պերճ զարդարանք.  
 Նոցա մարմնից ծորացել են  
     Բազմահանգույց ճոխ յերկրներ,  
 Վորոնց շուրջը իմաստուններն  
     Միտք են ճոճում զարերից վեր.

Միտք են ճոճում ու խճճվում  
     Մտքերի մեջ յեթերային,  
 Ճիգ են թափում, վոր խճճեն  
     Զառանցանքի այդ բարդ ցանցին,  
 Մշակներին, վոր լիզում են  
     Շեկ հողերը կոշտ, չոր ու հին,  
 Ծծում, լիզում, վոր ստեղծեն  
     Մեղքի կաթիլ տերերին.  
 Սակայն ինչքան շատ ու շուտ ե  
     Քամվել նոցա ուժը յերկաթ,  
 Այնքան ել շատ կուտակվել ե  
     Նրանց կրծքում զայրույթ ու թափ  
 Ու ցրվել են նոքա ամբողջ  
     Արևելքում անծայրածիր—  
 Հեռու, մատիկ, կպած հողին  
     Դարձած վոշոտ մոռացված իր.  
 Սակայն ունեն նոքա մի աստղ  
     Իրենց սրտի խոր—խորքերում,  
 Վորը սնվում, մեծանում ե,  
     Յերբ մարմինն ե նոցա հյուծվում:  
 Ստեղծել են նույնպես նոքա  
     Իրենց սրտի զուտ սրտիկից  
 Վառ ու պայծառ դեմքեր արդեն  
     Ու նետել են նոցա հանդես,  
 Վորոնք նույնպես այդ ուշ ժամին  
     Հավաքվել են իրարու մոտ,  
 Հավաքվել են, մերք են անում  
     Այս մեր կյանքի որենքներով,  
 Վորպես ցնցեն վերջին անգամ  
     Այս աշխարհը հիմքից նեխած,  
 Ցնցեն հիմքից, մաքրեն նրան  
     Ճարպակալած որենքներից:  
 Ու ահա այդ կես գիշերին

Յելան նոքա կիսամերկ,  
 Շտապ թուան նկուղներից  
 Մզկիթները հսակերտ,  
 Յեկ բարձրացան դեպ մինարեն  
 Եղ գիշերին ահավոր,  
 Վորոտացին դեսպի հեռուն  
 Իրենց ձայնով անսովոր:  
 Նոցա կրծքում հավաքվել եր  
 Մաղձը մեռած սերունդների,  
 Վոր չորացան ծովափերում  
 Յեկ մայթերում քաղաքների.  
 Մկաններում ու մաքերում,  
 Տանջվողների կամքն եր հուժկու  
 Ու բոլորի հույսով վառված  
 Կովի զանգը յելան տալու:

3.

Մինարեյից մինչ մինարե  
 Զայն են տալիս իրարու  
 Ու միասին—բոլորը մեկ  
 Վորոտում են դեպ հեռու:  
 Հորիզոնից մինչ հորիզոն,  
 Յեղերքներից մինչ յեղերք  
 Զայնը ահեղ սլանում ե  
 Հրեղնացած կայծի հետ:  
 Զայնը նոցա,—կամքը հանուր  
 Ու վառ հույսը արևոտ,  
 Վորին դարեր սպասել ե  
 Արեելցին յերազկոտ:  
 Ու ձայնի հետ կարծես ձեղքվեց  
 Հողը հաղար մի տեղից,  
 Յեկ թվաց թե մեռելներն ել  
 Դուրս նետվեցին շիրիմից . . .

Հապճեպ յելան դեմքերը չոր  
 Նկուղներից հսամյա,  
 Վորոնց միջին կազմալուծվեց  
 Մարմինները յերկաթյա.  
 Դուրս նետվեցին զքեղազարդ  
 Քաղաքներից լուսավոր,  
 Վորտեղ մինչ մահ—ձիերի տեղ  
 Կառք են քաշել ամեն որ.  
 Դուրս սողացին խրճիթներից  
 Լայնածավալ արևելքի,  
 Վորոնք անվերջ ծառայել են  
 Իրեն շիրիմ աշխատողի:  
 Դուրս նետվեցին մերկ ու տկրոր  
 Ժայիաններով քարացած,  
 Վորոնք անվերջ ջրերի տեղ  
 Քրայնքով են հաղեցած,  
 Կամ բընձի արտերի մեջ,  
 Ճահիճներում ծանծաղոտ,  
 Հունձ են արել որ ու գիշեր  
 Որփա հացի միշտ կարոտ.  
 Յեկ կամ թեյի դաշտերի մեջ  
 Սրեելքում ընդարձակ  
 Արշալույսից մինչ վերջալույս  
 Աշխատել են շարունակ:  
 Դուրս նետվեցին բուրիկ, տկրոր  
 Ծերկ, անոթի ու ծարավ,  
 Դուրս նետվեցին կին, յերեխա,  
 Ծերուկ, ջահել ու պառավ . . .

Դուրս սողացին բոլնը մեկ  
 Ում վոր հոգում անդադար  
 Սերմ եր ձգել արել թեժ  
 Դաշտերի մեջ միշտ ոտար:

Ու թոշում են խառնիճաղանձ  
Մասսաները բազմալեզու,  
Հոսում ահեղ, վոնց վոր լավա,  
Աշխարհները հեղեղելու . . .  
Նոքա այրիւած, հրեղված են  
Արևներով վառ ու անշեջ,  
  
Նոցա սիրտը թաթախված ե  
Բոցավառվող լույսերի մեջ . . .  
Նոցա դեմքը դեղին ե —մութ,  
Ինչպես ավագն անապատի,  
Նոքա ամբողջ արևելքն են,  
Արևելքը հեքյաթների:  
Հեքյաթային ձիու նման  
Սլանում են ամեն կողմից,  
  
Անխոս ու լուս, խառնիճաղանձ  
Արշավում են հազար տեղից.  
Ու գիշերվա փոթորիկը,  
Նոր փոթորկով հաջորդեցին  
Հիմնահատակ կործանելով  
Մեհյանները ձոխ — թանկապին:  
Նոցա բերնի շունչը ահեղ,  
Ինչպես բոցը լավաների,  
  
Անհետ կերպով փոշի դարձրեց  
Մարմինները միշտ յուղալի:  
Ամեն մեկը կայծ ե վառվող,  
Մի մասնիկը արևերի,  
Վորին յերբեք չեն հանգնի  
Ովկյանոսներն այս մեր յերկրի:  
Ու թոշում են ամեն կողմից,  
Վորպես ձուլվեն մեկը — մեկի  
  
Յեկ միասին ջերմ վողջունեն  
Արևածաղն հողագնդի:

Լուռ պատովից հորիզոնը,  
Լույսը ընկալ ամպերին,  
Վորոնք հապճեալ փախուստ տվին  
Ճամբա տալով արկին.  
Յեկ դուրս յեկալ հորիզոնից  
Մեծ արևը ժպտերես,  
Վոր ծագել եր հազար անգամ  
Ու ժպտացել այսորվա պես.  
Բայց ամբոխը, վոր քանդել եր  
Մինարեներն հնամյա,  
Հին նամազով չվողջունեց  
Արևածաղն այդ որվա,  
Այլ բոլորի չոր դեմքերում  
Ժպիսր խաղաց մանկական  
  
Ու միասին արևի հետ  
Անեղաթափ դուրս յելան . . .  
Անհետ կերպով ավերեցին  
Պարիսպները չինական,  
Վորով մինչ այդ պաշարված եր  
Աշխարհամայր Ասիսն.  
Ելի անվերջ քար եր շարում  
Արևմուտքը դիմակված,  
  
Վոր այդպիսով ճզմի անվերջ  
Դեղինավառ բյուր մարդկանց:  
Աչքերն հառած մեծ արևին՝  
Նրա լույսով խելագար,  
Վոր ծծել են դարեր անվերջ  
Դաշտերի մեջ անդադար,  
Սլանում են սամումի պես  
Բռնած ուղին արևի,  
Վոր յերբ արևն արևմուտքը  
Ալ գույներով կվառի,—

Նույն բոցերով բոցավառված  
     Աշխարհը հին հազար տեղից  
 Ու կձուլվեն բոցերը այդ,  
     Բոցերի հետ ամենուրեք  
 Յեվ կստեղծվի աշխարհային  
     Չտեսնված մի խարույկ ...

Կայրվեն անհետ պալատները,  
     Վորտեղ մարդկանց կյանքով հարբած,  
 Վորոճում են ճարպոտ խելքով  
     Նոր ցնորքներ մահատարած:  
 Բոցավառված աշխարհում վողջ  
     Կայրվի ընդմիշտ հինը ճարպոտ,  
 Այդ բոցերում կվողջունեն  
     Մի թարմ կյանքի վառ առավոտ:

1925—26թ.

Սուխում—Յերևան.



51912